



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ**

ՀՐԱՄԱՆԸ

07 փետրվարի 2018 թվականի N..... 14-Շ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 45-րդ հոդվածով, հիմք ընդունելով «ԱՅՐՆ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության 2017 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 17/1 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

Հրամայում եմ

1. «ԱՅՐՆ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ տրամադրել երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող, հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4518915 Y=8467624, 2. X=4518697 Y=8467508, 3. X=4518454 Y=8467489, 4. X=4518503 Y=8467329, 5.X=4518285 Y=8467342, 6. X=4518057 Y=8467016, 7. X=4518256 Y=8466992, 8.X=4518578 Y=8467218, 9.X=4518612 Y=8466988, 10.X=4519106 Y=8466459, 11. X=4519303 Y=8466018, 12. X=4519448 Y=8465988, 13. X=4519622 Y=8466145, 14.X=4519205 Y=8466936, 15. X=4519087 Y=8467396 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) սահմանափակված 81.0 հա ընդերքի տեղամասից հրաժարման թիվ 15 հրաժարման հավաստագիրը,

2. կատարել փոփոխություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազումի երկաթի երևակման տարածքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/236 թույլտվությունում և ընդերքօգտագործման թիվ Պ-236 պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր):

3.Ընդերքի գործակալության պետին՝

1) երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասի մի մասից հրաժարման հավաստագիր տրամադրելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխված տարբերակները,


3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:



Ս. Մանուկյան

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ